

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն տեղեկատվություն է ներկայացնում 2018 թվականի հունվար-ապրիլի (այդ թվում՝ ապրիլի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2018թ. ապրիլի ամսական և 2018թ. հունվար-ապրիլի (աճողական) արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	<i>Չափի միավոր</i>	2018թ. ապրիլ	2018թ. ապրիլը 2017թ. ապրիլի նկատմամբ, %	2018թ. ապրիլը մարտի նկատմամբ, %	2018թ. հունվար-ապրիլ	2018թ. հունվար-ապրիլը 2017թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	107.3	96.9	x	109.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	<i>մլն.դրամ</i>	121 600.3	96.3	84.4	522 115.1	105.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	<i>մլն.դրամ</i>	49 101.3	102.1	143.8	129 455.1	102.2
Շինարարության ծավալը	<i>մլն.դրամ</i>	20 237.7	119.2	88.1	64 759.6	121.8
Առևտրի շրջանառությունը	<i>մլն.դրամ</i>	207 904.5	103.2	94.8	787 571.2	110.3
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	<i>մլն.դրամ</i>	130 640.5	120.7	100.5	487 107.7	117.6
Մպառողական գների ինդեքսը	%	x	102.4	99.7	x	103.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	<i>մլն.կՎտ.ժ</i>	557.6	96.6	91.8	2 667.3	99.6
Միջին ամսական անվանական աշխատավարձը*	<i>դրամ</i>	163 496	101.4	97.5	166 144	103.5
Արտաքին առևտրաշրջանառությունը	<i>մլն.դոլար</i>	540.3	121.6	89.2	2 221.8	131.2
	<i>մլրդ.դրամ</i>	215.4	x	x	1 069.5	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում	<i>մլն.դոլար</i>	180.1	109.4	87.2	764.5	125.5
	<i>մլրդ.դրամ</i>	79.8	x	x	368.0	x
ներմուծում	<i>մլն.դոլար</i>	360.2	128.8	90.2	1 457.3	134.3
	<i>մլրդ.դրամ</i>	135.6	x	x	701.5	x

* Այստեղ և հետայսու՝ ամսական ցուցանիշները ներառում են նաև փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները, քանզի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2017թ-ի 1582-Ն որոշման համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեին հասանելի է դարձել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) տվյալների բազան ամսական կտրվածքով և տեղի է ունեցել տեղեկատվական աղբյուրի փոփոխություն (հետայսու՝ օգտագործվելու է տեղեկատվական նոր աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ-ի վարչական ռեգիստրի ամսական տվյալները): Մինչ տեղեկատվական աղբյուրի փոփոխությունը ամսական ցուցանիշները չէին ներառում փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները: Փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները հավաքագրվում էին տարին մեկ անգամ և արտացոլվում էին միայն տարեկան ցուցանիշներում: Առավել մանրամասն պարզաբանումները տե՛ս էջ 56-ում: